Նոր ստացուած ձեռագրեր

7. (Թ. 1361) Աւետարան. բամբակէ հաստ թուղթ. հնամաշ, անմաքուր, նորոգուած կազմով. կողերը և փակեչը միաձոյլ արծաթից են. բաւական լաւ բոլորգիր, երկսիւն, 19 տող. զարդագրերով և զարդերով. ունի խորաններ և չորս աւ. պատկերներ:

Յիշ. Մատթէոսի սկզբում, նորաձև բոլորգրով. Ա. «...գրի ձեռամբ Գրիգորի վ-ին Քաջբերունւոյ. ի թվին ԳՃԼԳ տրէ ամսոյ է ի սուրբ անապատին Լմայ. ի սկիզբն աւ. ի յանոցն Սքանչելագործին»:

Բ. վջ. Մատթէոսի. «Գրեցաւ ի սկիզբն թագաւորութեան Բագրատունեաց Աշոտոյ, ձեռամբ անարժան Գրիգոր Մաշկեորի ի ժամանակս հայրապետութեան Գէորգա կաթուղիկոսին որ օծեաց զԱշոտ թագաւոր հայոց ի թվ. մերում ԳՃԼԳ (=884) և քաղոց ամսոյ Ժ ի անուն սրբոյն Սքանչելագործին վանիցն»:

Երկու յիշ. արտագրութիւն են հին օրինակից. գրիչը յիշ. չունի. ձեռ. գրուած է ԺԴ—ԺԵ դարում:

Բնագրի սկզբում գրուած են Թուղթ Եւսեբի, կանոնք. գլուխք և ցանկք Աւետարանաց:

8. (Թ. 1362) Աւետարան. հասարակ թուղթ. հասարակ բոլորգիր երկսիւն, ունի հասարակ զարդ ու զարդագրեր. 4 թերթ մագ. պահ. երկաթ աւետ:

Յիշ. «փառք.. ստացան.. Յակոբը և կողակիցն իւր Լաոխաթուն, որ փոխեալն է առ Քրիստոս և միւս կողակիցն Նուշանն և եղբայրն իւր Աստուածատուրն .. գրիչն Պետրոս երէց, որդի Տէր Սաամի .. ի թվականութեանս հայոց ՌՃԻԲ (=1773) և ի յամսեանն հռոմայեցւոց ապրիլ ի Ժ. ի գաւառս Խաղդեաց. որ այժմ ասի Բաբերդ. ընդ հով. սուրբ Աստուածածնին. ի հայրապետութեանն Տեառն Յակոբ կաթուղիկոսի. ի յաթոռ սուրբ Էջմիածնի .»:

8 (Թ. 1363) Աւետարան. թուղթ. կազմն ունի 2 արծաթ խաչ և կոստղեր. հասարակ բոլորգիր. չափազանց հնացած. անմաքուր, բորբոտած:

Յիշ. «Փառք .. կատարեցաւ ձեռամբ տէր Առաքելոյ Սինեաց յանապատիս Անդեղակութոյ ի թվիս հայոց ՊՀԱ (=1422) ի խնդրոյ սրբասէր. աստուածահաճոյ. կուսակրաւն քահանային Գրիգոր աբեղային ... որդի Թագաւորշահի և եղբայր Խորշայի ...»:

9. (Թ. 1364) Աւետարան. *Թուղթ. կազմի աջ կողը զարդարած է խաչերով. սրտերով և կոտղերով. երկսին բոլորքը. նկարներով և զարդերով:*

Տնօրինական նկարներ. *Մկրտութիւն, Պայծառակերպութիւն, Նկանակի բաշխելն և գնալն ի վերայ ծովուն. Բժշկութիւն անդամալոյծի և դիւահարի, Յարութիւն Ղազարու, Ծաղկազարդ. Համբարձում. Հոգեգալուստ.*

Նկար գրչի եւ ստացողի՝ *քահանան, քոլոզ գլխարկով բազմած աթոռի վերայ, մի ձեռին Սաղմոս «Երանեալ» է այր միւսում բռնած քանոն սովորցնում է երկու երեխայի, մէկը ծնկաչոք, միւսը կանգնած:*

Հետեւեալ երեսում նոյն քահանան նստած է՝ «Յոհանէս երէցն է». աւետարանը ծնկների վրայ, դիմացը նման տարազով մի ծերունի քահանայ բազմած ձեռքերը մեկնել է ստանալու սուրբ գիրքը:

Զորս աւ. պատկերները. սակաւաթիւ նկարներ և զարդեր լուսանցներում:

Յիշ. «Փառք . . . քահանան Յոհանէս ստացաւ ի վայելումն անձին իւրոյ. զի նորընծայ է ի կարգ և յաստիճան քահանայի.. յիշատակ իւրն և բարի ծնողաց իւրոց Դանիէլ քահանայի. և Խիկարի. հանգուցելոյն ի Քրիստոս. և եղբարց իւրոց հարազատաց Մովսէս քահանայի. և Ներսէսի. այլ և բազմերախտ քեռոյն իւրոյ տէր Աւագ քահանայի: Եւ արդ գրեցաւ սա ի վանս Ցիպնայ ընդ հով. ամենազօր սուրբ Նշանի և սուրբ Ստեփաննոսի: Ձեռամբ յոգնամեղ և անիմաստ գրչի. Գրիգորի պիտակ անուն վ-ի: Յամի ՊԿԸ (= 1419) *Թըւականի. ի հայրապետութեան Տեառն Պօղոսի. և յաշխարհակալութեան Ղարայ Ըսուֆին: Յորում ամի և մարախ եկ յարեւելից ի վերայ երկրի. և Թանձրախիտ ծածկեաց զգաշտ և զլերինս. զսար և զձոր. միահաղոյն ի Սալմաստայ մինչ յԱրզրումն. և կերաւ շատ վաստակ ի բազում տեղիս. յորմէ սասանեցան մարդիկք. և եղեւ սըղութիւն . . .»:*

Յիշատակարանիս անմիջապէս վերջը կցած է. «Խունք և պատուէր սուրբ գրոցս առ այնոսիկ որ ժառանգեն զսա. յապայս ժամանակաց: Վասն զգուշութեան»:

Բնագիրն *սկզբից ունի. ա. Տեառն Ներսէսի արարեալ պատճառ Ժ խորանաց:*

բ. Յայլմէ ասացեալ բան վասն խորանաց աւետարանիս: Դրախտ իմանալի սուրբ եկեղեցի . .»:

գ. Թուղթ Եւսեբի. Ժ խորանք

դ. Գլուխք:

10 (Թ. 1365) Մաշտոց ձեռնադրութեան քահանայից եւ իշխանութիւն գաւազանի. *Թուղթ. բոլորգիր. երկսիւն գունաւոր տողերով շրջափակուած. ունի նկար գաւազան տալոյ, երկու խորան և հատուկ զարդագրեր։*

Յիշ. «Հազար հարիւր ընդ ութ դասի. յարաբարդեա չորս աւելի (=1735)*. ի նոյեմբեր ամսոյ քսանի. հայկիականըն թուականի. միշտ յիշատակ սա յար լիցի. ամն խոհեմ տեառն մեծի. Աստուածատուր վ-ի. իմաստութեան ցանկացողի. գրեցաւ մատամբ մեղսամածէ. յուէտ չնչին քարտուղարէ. պետակ վերծուն Յովանիսէ. տեղեաւ գոլով ի Գամրիսէ ...»։*

11 (Թ. 1366.) Աւետարան. *Հասարակ թուղթ. կազմի ակողը ունի արծաթի խաչեր և կոտղեր։ Բոլորգիր, երկսիւն. աւ. նկարներով և չորս խորաններով։*

Յիշ. ա. «գրեցաւ ի ՌԼԹ (=1590) *թուին փառք Աստուածոյ ամէն»։*

Վերջի գլխաւոր յիշ. պատմական մասը կորած է։

12 (Թ. 1367) Աւետարան. *թուղթ. անմաքուր, կազմի երկու կողերն ունին մի մի խաչ և արծաթէ կոտղեր։ Բոլորգիր. երկսիւն ունի չորս Աւ. և նոյնքան խորան։*

Յիշ. կորած է. ըստ գրութեան ԺԵ *դարու է։*

13 (Թ. 1368) Աւետարան. *Թուղթ. արծաթ կազմով ակողի վրայ խաչելութիւն Յիսուսի, Բ. Աստուածածին Յիսուս մանկամբ. «Յիշատակ է սուրբ աւետարանս Ղու(կաս)ջանին* (?) *և իւր որդի Աղաճանին իւր (ալհալ) վաստակոց շինեաց եասուր կաթուղիկոսին։—» Երկսիւն բոլորգիր ունի նկարներ* Տնօրինականք. *Համբարձումն, Նստելն փառօք յաւեան. Յարութիւն. Իջանելն ի դժոխս. Պատանումն և չորս աւ. ոսկէնկար։*

Յիշ. «Փառք . . տոայցս Ստեփաննոս քահանայն . . յիշատակ հայրն Աստուածատուրն և մայրն Մամայ-խաթունին. և քուերցն Խալխաթունին, Մուչալխաթունին, և Շամփաշին . . և եւուն զսա ընծայ և նուէր ի դուռն նորքաղաք ամենաւրհնեալ սուրբ Աստուածածնին . . գրեց . . Ներսէս կրաւնաւոր . . որդի Գուգջերէկի և Էմնախաթունի. յաստուածարեան կղզիս Աղթամար ընդ հով. ամենայաղթ սուրբ Խաչիս և սուրբ Նշանիս. ի հայրապետութեան Տեառն Զաքարիայի և ի թըւականիս հայոց ՋԷ (=1458) *. . :*

Յիշ. երկար է և լի կրկնութիւններով։ Ունի յիշ. ՋՁԶ (=1537) *և* ՌՃՀԵ (=1726) *թուերից։*

14 (Թ. 1369) Աւետարան. *միաձոյլ արծաթապատ կազմով,*

որի վակիչը ընկած է, թուղթ. երկսիւն բոլորգիր, ոսկէնկար հասարակ խորաններով ու զարդերով։

Վերջում տարբեր գրչով ունի յիշ. ՌՄԽԸ (=1799 թ.) ստացող Յոհաննէս վ-ի. գրութիւն ժամանակն է ԺԷ դար։

15 (թ. 1370) Աւետարան. թուղթ. չափազանց հնամաշ թերի և քայքայուած. կազմի ա կողի վրայ կան 8 խաչ և 4 սիրտ։ Բոլորգիր, երկսիւն, 4 աւ. նկար և 4 խորան։

Յիշ. գլխաւոր չկայ. յետոյ են գրուած ՌԼԶ (=1587) թուականի. Մաղդայոի Մխիթար քահանայինը անթուական. Դաւիթինը դարձեալ անթուական և Յովանիսինը, որոնցով յիշեալները նուէրներ են տուել Մանավանից սուրբ Պօղոս եկեղեցուն. հին է միայն հետևեալը։

«Եւ Թումայ մահդասի սուտ անուն քահանայ գրեցի զԼուկաս գլուխ աւ. ի յայդիս Մանեվանից Աստուածածնին չարչարանաւք...»։

Ժամանակ գրութիւն ԺԵ դար։

Այս ձեռ. ուղարկուած է Լօռուայ վիճակի Վարդաբլուր գիւղի եկեղեցում, ձեռ. գործակալ Ղևոնդ քահանայի։

16 (թ. 1371) Աւետարան. խառը մագաղաթ և թուղթ. նորոգուած. երկսիւն, բոլորգիր. 4 աւ. հասարակ նկարներով, խորաններով և զարդագրերով. վջ. թերի։

Յիշ. «Ընտացող սուրբ աւ. տէր Բարսեղն թվական հայոց ՌԴԴ (=1645)»։

17 (թ. 1372). Ճաշոց փոքր, թուղթ. կազմի կողերի վրայ կան արծաթի կոստղեր, խաչ, և 8 սիրտ։ Հասարակ բոլորգիր, երկսիւն 18×13 մեծ.։

Յիշ. «Փառք... Արդ գրեցաւ սուրբ աւ. ծննդեան և գալստեան. մատնութիւն. թաղման. և յարութեան յիշատակ հոգոյն Կիրակոսին և հօրն Խաչատրուն և մօրն Շաւումին... ձեռ. Ներսէս արեղայի.. գրեցաւ և կազմեցաւ Մաշթոց և սուրբ աւ. և գանձարան ի թվ. մեր ՌԺԷ (=1568) ընդ հովսուրբ Յովաննէսին, որ Ամիրդաւլ կոչի..»։

Ունի մի քանի անկարևոր յիշատակարաններ։

Մեսրոպ Եպս.